Արձանագրություն N 4

ՀՀՔԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի

գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան 10.01.2019 թ.

ժամը 16:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ	Տ. Մանուկյանը
Հանձնաժողովի անդամներ	Մ. Գրիգորյանը /գնահատող / Ս. Թորոսյանը /գնահատող/ Հ. Հարությունյանը /բացող/ Ա. Յազչյանը /բացող/
Հանձնաժողովի քարտուղար	Հ. Ավետիսյանը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

(Տ. Մանուկյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1.1 Գնման գործընթացի արդյունքում պայմանագիր կնքելու հնարավորության մասին:
Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

1. ՀՀՔԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման գործընթացի արդյունքում պայմանագիր կնքելու հնարավորության մասին.

(Տ. Մանուկյան)

2.1 Ընդունել ի գիտություն, որ.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի <<Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեին գումար հատկացնելու մասին>> N 1314-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեին հատկացվել է գումար «Սևան» ազգային պարկի» Լճաշեն-Սևանի թերակղզի հատվածի գոտիավորման նախագիծ և քաղաքաշինական կանոնադրություն» նախագծային աշխատանքների գնման համար:

2018 թվականի դեկտեմբերի 12-ին վերոհիշյալ աշխատանքների գնման համար Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կողմից հայտարարվել է ՀՀՔԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման գործընթաց և հայտերի բացման օր է սահմանվել 2018 թվականի դեկտեմբերի 17-ը:

Գնահատող հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 2 որոշմամբ ընտրված մասնակից է հայտարարվել գնման գործընթացի միակ մասնակից <<Արխիտոն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ ընկերություն): Ընկերությանը նույն օրը տեղեկացվել է դրա մասին և էլեկտրոնային եղանակով տրամադրվել պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը:

«Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի

նախագիծն ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Այս իրավիճակում ընկերության համար պայմանագրի ստորագրման ժամկետը լրանում է 2019 թվականի հունվարի 21-ին:

Քանի որ ծրագրի գումարը հատկացվել էր 2018 թվականի նոյեմբերին՝ 2018 թվականի բյուջետային տարվա համար՝ հրավերով նախատեսվել էր, որ ընտրված մասնակցին 2018 թվականի 4-րդ եռամսյակում հատկացվելու է կանխավճար (կանխավճարի բանկային երաշխիքի առկայության դեպքում) պայմանագրի գնի 100 %-ի չափով:

Ընկերության կողմից հրավերով նախատեսված ժամկետում կանխավճարի բանկային երաշխիք չի ներկայացվել և 2018 թվականին գնման պայմանագիր չի կնքվել:

2018 թվականի բյուջետային տարվա ավարտով պայմանավորված՝ (տվյալ բյուջետային տարում չօգտագործված գումարները վերադարձվում են ՀՀ պետական բյուջե) 2019 թվականին հնարավոր չէ ՀՀՔԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման գործընթացի շրջանակներում ընկերության հետ պայմանագիր կնքել:

3. ՀՀՔԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման գործընթացը <u>չկայացած հայտարարելու մասին</u>

(Տ. Մանուկյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.1-րդ կետը և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը՝ ՀՀՔԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած <<Պայմանագիր չի կնքվում>> հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ — Տ. Մանուկյան

Անդամ — Մ. Գրիգորյան

Ս. Թորոսյան

Հ. Հարությունյան

Ա. Յազչյան

Քարտուղար — Հ. Ավետիսյան